



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԵՍՓՈՒՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

25 ՄԱՅԻՍ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Բ. ՄԻԻԼԻՆՏԻՍԵԱՆ

— 1873 —

Handwritten notes at the top left of the page.

Decorative horizontal line with a central motif.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳԵՂԱԿԱՆ ԼՍՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԿԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ՍԵՆՏԻՆԱԿ

ՊՐԻՆՏՈՒՄ Ի ԿՈՆՍՏԱՆՍՊՈԼԻՍԻ

ՆԱԽՐԱՊՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ

ԸՆԴՈՒՆՄԱՆ ԲԱՆԿԱՆ ԴՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳԵՂԱԿԱՆ ԼՍՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԿԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ՍԵՆՏԻՆԱԿ

ՆԱԽՐԱՊՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ



ՊՐԻՆՏՈՒՄ Ի ԿՈՆՍՏԱՆՍՊՈԼԻՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԿԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ՍԵՆՏԻՆԱԿ

— 1873 —

ԸՆԴՈՒՆՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ՍԵՆՏԻՆԱԿ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԷՆ

ՆԻՍՑ ԿԲ.

25 ՄԱՅԻՍ 1873

ՆԱԽՐԱՊՈՒԹՅԱՆ — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ.
ՍՏԵՆԱԳԵՏ. — Յ. ԷՖԷՆՏԻ ՏԱՏԵԱՆ (Բ. Ատենասպետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Վաւերացում նախորդ ՇԸ. ՇԹ. Կ. եւ ԿԱ. նիստերու ատենագրութեանց :
2. Վաւերացում նորընտիր Երեսօխոխանաց :
3. Վերանորոգում $\frac{1}{3}$ մասին ընդհանուր ժողովոյ :
4. Վերանորոգում գիւանին ընդհանուր ժողովոյ :
5. Ատենական կանոնադրութիւն :
6. Հրամարում Գաղ. ժողովոյ $\frac{1}{4}$ Ուղամոց :

Ժամը 8 քառորդ անցած էր, երբ Ատենանոց բացուեցաւ ՚ի ներկայութեան 56 երեսօխոխանաց, մեծամասնութեան ժողովոյ, որոց վերջին թիւը 59 ի յանդեցաւ :

ՎԵՆԵՐԱԿՆԻՄ ԵՆԵՐԿՆԱԿՆԻՄ Կ. ԵՆ ԿԱ. ՆՍՏԵՐՈՒ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ՇԸ. եւ ՇԹ. նստերու Ատենագրութեանց վրայ դիտողութիւն ընող չըլլալով քուէի դըրուեցան եւ ընդհանուր հաւանութեամբ վաւերացան :

Կ. նիստի Ատենագրութեան վրայ հետեւեալ դիտողութիւնք տեղի ունեցան :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — 854 Երեսին երկրորդ սիւնակին մէջ Իզմիրլեան Տ. Մատթէոս վարդապետին պատասխանելով հերքած եմ ա-

նոր մէկ խօսքը՝ այն է. « խաչատուր եպիսկոպոս կըսէ եղեր թէ բոնութեամբ զինքը ձեռնադրեր են » . ինձմէ ետքը նաեւ Օղսէն է ֆ. խօսելով հերքած է միեւնոյն առարկութիւնը : Սակայն Իզմիրլեան Տ. Մատթէոս վարդապետի խօսքերուն մէջ յերես 853, բոնութեամբ ձեռնադրուեր է խօսքը չկայ, մինչդեռ իւր խօսած ատենը զայն մէջ բերած էր, եւ մենք ալ իրեն դէմ պատասխանեցինք. զի եթէ ինք ըսած չըլլար, մեր ըսածներն օղային էին, եւ հարկ չկար այնչափ առարկութիւններ ընելու. ուստի կամ պէտք է մեր այն խօսքերը վերջընել, որ չէ կարելի, եւ կամ անոր խօսքերուն մէջ դրուած համարել « բոնութեամբ ձեռնադրուած ըլլալու » առարկութիւնը :

ՓԱՔԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — 858 Երեսին երկ-

բորդ սիւնակին մէջ Օգսէն էֆ. ի խօսքին դէմ պատասխան մը տուած եմք ես եւ Տ. Թաղէսու եպիսկոպոս. այդ պատասխանուն մէկ կտորը միայն իմն է, որ պիտի ըլլայ «ինչէն գիտեա, թերեւս քու գիտցածդ սխալ է»: Այս է միայն իմ խօսքս. իսկ միւսը՝ այն է «թուական չկայ եկած թղթոց մէջ» իմն չէ. զի ես Յանձնաժողովոյն անդամ չէի, որ կարենայի թուական ըլլալը կամ չըլլալը գիտնալ:

ՊԵՆԱՆ Թ. ԷՖ. — Սակայն ուրիշներ ալ նոյն օրն այդ խօսքը կրկնեցին թէ թուական չկայ. ասոնք անուններովն յիշուէին աղէկ կըլլար. վասն զի ետքէն իմացանք որ թուական ալ կայ եղեր:

ԿԱ. նստի Ատենագրութեան վրայ ալ հետեւեալ գիտողութիւններն եղան.

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — 864 երեսին Ա. սիւնակին մէջ իմ խօսքիս վերջին պարբերութիւնը պիտի ըլլայ սապէս. «Եւ թերեւս կա՞րող պիտի ըլլամ հաստատել թէ Ազգն իր «ընտրած կրեւորխանաց վրայ սխալած չէ»:

Դարձեալ, 867 երեսին երկրորդ սիւնակին մէջ «գիւսնը տակաւին կարդ որոշած չէ» խօսքին դէմ իմ պատասխանս այսպէս պիտի սկսի. «Ատենագրութեան էֆ. քանի անգամ կարողաց արդէն, եթէ խնդիրներն իրենց ծագման կարգաւը ներկայացուցած ըլլար, այս «չափ փճաբանութիւնք տեղի չպիտի ունենային. վարագոյրը պիտի բանամ . . . »:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — 868 երեսին երկրորդ սիւնակին մէջ, Ազգամարայ խնդրոյն համար եղած առաջարկութեանց քուէի գրուելու ձեւին կարեւորութիւնը ցուցնելու համար օրինակ մը մէջ բերած ատենս՝ թէ որ սալոր չըզանամ ի՞նչ պիտի ընեմ ըսի եւ ուրիշ պտուղներ յիշեցի. այն միջոցին Ատենագրութեան էֆ. մնացածն ալ գուն կեր ըսաւ. Պատմական ճրչութեան համար կուզեմ որ նշանակուի:

Կ. եւ ԿԱ. նստերու Ատենագրութեանց վրայ գիտողութիւնք վերջանալով, խանութք ալ քուէի գրուելէ ետեւ վաւերացան:

ՎԵՐԵՐՏՈՒՄ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՆԵՆՑ

Ընտրութեանց Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ նոր եկած տեղեկագիրը կը կարգացուի, որոյ պատճենն ահաւասիկ.

Ամենապատիւ Արքայան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Երեսօրխանական ժողովոյ.

Չմէկտեղի Գուտական Ընդհանուր ժողովու երեսօրխան ընտրած է.

Համարձուած էֆ. Սարը Քէչիշեան:

Թէքիրտաղի հրաժարեալ երեսօրխան Մկրտիչ էֆ. Տամատեանի տեղ՝ Գաւառական Ընդհանուր ժողովու երեսօրխան ընտրած է.

Տիգրան էֆ. Արնանեան

Սոյն ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելով, Պատկառելի ժողովոյդ կը ներկայացնեմք ՚ի վաւերացումն:

41 Մայիս 1873

Ի Ղալաթիա	Ի Կիւսիս Գործ. Յանձ.
Ատենագրար	Ատենագրար
ՉԵՃՈՐ ԿՐԳ ՓԻՐՉԵԼԵՄԵՆՑ	Ս. Գ. Գ. ՓՇՇՇՇՇՇ

Ատենագրար էֆ. սոյն տեղեկագիրը քուէի կը դնէ, եւ ժողովու ատենց գիտողութեան կրնադունի եւ կը վաւերացնէ կատարուած նոր ընտրութիւնները:

ՀՐԵՓՈՐՈՒՄ 2 ԵՐԵՍՓՈՒՆԵՆՑ

Կ. նստին մէջ վաւերացեալ նորընտիր երեսօրխաններէն

Մկրտիչ էֆ. Վարժապետեան
Արէլ » Կիւլպէկեան

հրաժարած ըլլալով, Ատենագրար էֆ. անոնց հրաժարագրերը ժողովին ներկայացուց, որք կարգացուցան:

Ահաւասիկ անոնց պատճենները.

Ամենապատիւ Արքայան Հայր.

Նիկոմիդիոյ ժողովուրդը մեծ պատիւ է ըրեր ինձ երեսօրխանական պաշտօնի կոչելով. սակայն ցաւ ՚ի սիրտ պարտաւորած եմ յայտնել Ձեր Արքայութեանը թէ անձնական զբաղմունքներս արդեւք կըլլան ինձ այդ վսեմ պաշտօնը խղճի մտօք կատարելու. ուստի կը հրաժարիմ:

Ձերուդ բարձր Արքայութեան
25 Մայիս 1873
Խաղիւղ ՄԿՐՏԻՉ ՎԱՐՉԱՊԵՏԵԱՆ

Ամենապատիւ Արքայան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Երեսօրխանական ժողովոյ.
Ձերուդ Ամենապատուութեան թիւ 634

Եւ մարտ 26 թուականաւ մէկ հնորն ստանալու պատիւն ունեցայ, որով Կեսարիոյ փճակէն Ազգային երեսօրխանութեան ընտրութիւնս վաւերացած ըլլալն իմացնելով հրաւիրած էք զիս յիշեալ Պատկառելի ժողովոյ նիստերուն ներկայ գտնուելու:

Արքայան Հայր, կը ցաւիմ Ձերուդ Ամենապատուութեան յայտնել՝ որ այդ պատիւն ընդունելու անկարող փճակս, այն է ՀՅԷԷԷ չգիտնալս՝ ստիպած է զիս հրաժարիլ այդ պաշտօնէն եւ խնդրել Ձերուդ Ամենապատուութեան, որ բարեհաճիք այդ մասին հարկ եղած անօրէնութիւնն ընել:

Մնամ Ձերուդ Ամենապատուութեան 6 Ապրիլ 1873
Կ. Պոլիս ԱՐԷԼ ԿԻՒՂՊԷԿԵԱՆ

Սոյն հրաժարականաց վրայ հետեւեալ գիտողութիւններն եղան:

ԷՆՔՍԷԻՃԵԱՆ Տ. ԷՖ. — Կը ճանչնամ Մկրտիչ էֆ. Վարժապետեանը, եւ լաւապէս գիտեմ որ իր անձնական գործերը կրնան իրեն ժողովի օրերը ներկայ գտնուելու. հետեւապէս անընդունելի կը դատիմ իւր հրաժարականը:

Տ. ՂԵԻՈՆԻ ՎԱՐՉ. ՓԻՐՉԱԼԷՄԵԱՆ. — Արել էֆ. Կիւլպէկեան Կեսարիոյ ժողովուրդեան վատնութիւնք գրուած հանրաձայնօթ անձ մ'է դժբաղդարար Հայերէն չգիտնալուն համար հրաժարել է. ասանկ չատեր կան, միթէ այս պատճառը բաւական է իւր հրաժարականն ընդունելու. կառաջարկեմ որ այս պարագայն նկատողութեան առնուի եւ պէտք եղած միջոցը խորհուի:

ԱՏԵՆԱԳՐԱՐ ԷՖ. — Երբ երեսօրխան մը իւր կամար կը հրաժարի, ժողովը չկրնար զայն ստիպել:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Կիւլպէկեան էֆ. ի հրաժարման խնդրոյն մէջ իրաւանց կէտ մը կայ. թէ որ ժողովն իր ատենին մէջ միայն Հայերէն խօսելու որոշում ըրած է, այդ հրաժարման դէմ ըսելիք չկայ. իսկ թէ որ այդպիսի որոշում եղած չէ, կրնայ ընդունուիլ անոր պաշտօնը. ուրիշ բան է թէ որ ընաւին հայերէն չհասկնար, հետեւապէս եւ չկրնար այն կամ ո՛չ քուէ տալ: Ուստի ստուգել հարկ է, թէ որ միայն հայերէն չխօսիլն է հրաժարման

պատճառը, ինչո՞ւ ամբողջ դատարի մը վստահութեան արժանացած մէկ անձը մերժենք:

ԱՏԵՆԱԳՐԱՐ ԷՖ. — Քանի որ Հայոց ժողով է հոս, հարկաւ հայերէն պիտի խօսուի. ստիկա կարծեմ որոշման կարօտութիւն մը չունի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ասկէց առաջ Մանուկեան Մանուկ էֆ. երեսօրխան ըլլալով հայերէն չկրնալ խօսելուն համար տաճկերէն կը խօսէր ժողովին մէջ. բայց հայերէն կը հասկընար. ասանկ հայերէն հասկնալ եւ չխօսիլն ուրիշ է, բնաւ չհասկնալն ուրիշ. վասն զի բնաւ չհասկնալէն կրնայ ըլլալ որ սխալ քուէ մը տայ:

ԻՅՃԱՍՍԵՐԵԱՆ Յ. ԷՖ. — Հայոց ժողովին մէջ հայերէն պիտի խօսուի եւ հետեւապէս այս մասին որոշման կարօտութիւն չկայ ըսաւ Ատենագրար էֆ. շատ լաւ. բայց անդին ցաւալի իրողութիւն մը կայ որ դէմ կուգայ այս յայտարարութեան: Մեր եկեղեցեաց մէջ տաճկերէն քարոզ ալ կը արուի. եթէ Հայոց ժողովին մէջ հայերէն խօսուիլը պայման մ'է, ինչո՞ւ եկեղեցեաց մէջ ալ այս պայմանը չըգործադրուի եւ տաճկերէն լեզուով քարոզ կը արուի, ուստի որոշում մը պէտք է: Օրինակի համար կրնայ ըլլալ որ վաղն Զմիւռնացի մը երեսօրխան ընտրուի եւ ըսէ թէ ես ոչ հայերէն եւ ոչ տաճկերէն գիտեմ, այլ միայն Յունարէն. նոյնպէս Ամերիկացի մը Անգղիերէն միայն գիտէմ ըսէ. այն ատեն մեր ատենագրութիւնները համալսարհային այլ եւ այլ լեզուով բարեխնան խառնակութիւն մը պիտի ըլլան: Ասոր դարմանը սա է ըստ իս. վերաբննիչ Յանձնաժողովին յանձնելու է որ օրինաց ծրագիր մը ըրէք այս մասին եւ որոշուի որ ազգային ժողովոյ մէջ ազգային լեզուով միայն խօսինք:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Այս մասին Օգսէն էֆ. ի ըսածը կերկրորդեմ, սա տարբերութեամբ միայն որ հարկ չկայ մասնաւոր օրինաց ծրագիր խնդրելու. ինձի համար ինչպէս Ատենագրար էֆ. ըսաւ, Ազգային ժողովոյ մէջ հայերէն պէտք է խօսուի. ստիկա ՚ի բնէ օրէնք մը կը համարիմ. մեր երեսօրխանաց մէջ կան որ հայերէն չեն կրնար խօսիլ բայց կը հասկնան եւ հասկնալին բաւական կը սեպնն, ըսել է խօսելու վախաք չունին. սա

կայն կրկնակեան էֆ. հայերէն չգիտնալն իր խղճին դէմ համարելով կը հրաժարի, եւ առարկուեցաւ որ չընդունուի իւր հրաժարականը. ես կառաջարկեմ որ անդամ մը հարցուի իրեն, եւ թէ որ նորէն հրաժարի այն ատեն ընդունուի իւր հրաժարականը: Իսկ Վարժապետեան էֆ. ի հրաժարականն այսօր կրնայ ընդունուիլ, որովհետեւ քանի որ իւր անձնական զբաղմանց պատճառաւ կը հրաժարի, մենք չենք կրնար ստիպել զինքը:

Հուսկ ուրեմն քուէի գրուելով այս խնդիրը, Վարժապետեան էֆ. ի հրաժարականն ընդունուեցաւ. իսկ կրկնակեան էֆ. ի հրաժարականին ընդունուիլը կամ չընդունուիլը յաջորդ նիստին թողուեցաւ, գիւտնին ձեռք որ կարծիքն անուելու համար:

ՎԵՐՆԱՐԳՈՒՄ 1/5 ՄԵՐՆ ԸՆԴՆՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ատենադպիր էֆ. յայտնելով թէ յոգովոյն մասնակի վերանորոգման հինգերորդ եւ վերջին շրջանը ներկայ մայիս ամսոյն լրացած ըլլալուն, ըստ Սահմանադրութեան 1/5 մասին վերանորոգումը կատարել պէտք է, եւ թէ այս հինգերորդ շրջանին վիճակացոյցին մէջ են աշխարհական երեսփոխանաց համար միայն Սամաթիոյ եւ Խասգիւղի թաղերը, սոյն երկուց թաղից երեսփոխանաց ցուցակը ներկայացուց, որ ահաւասիկ:

Ե. Վ Ի Ժ Ո Վ

ՍԵՄԸԹԻՃ

- | | | |
|------------------|-------------|--------|
| 1. Ապրո | Սահակ | Էֆէնտի |
| 2. Արշակ | Յակոբոս | » |
| 3. Թիւլեան | Յարութիւն | » |
| 4. Խօճասարեան | Օգսէն | » |
| 5. Ղազարոսեան | Քրիստոստուր | » |
| 6. Միքայէլեան | Սիմոն | » |
| 7. Սահակեան | Սիոս | » |
| 8. Օտեան | Նշան | » |
| 9. (- - - - -) | | |
| 10. (» » » ») | | |

ԽՇՍԳԻԻՂ

- | | | |
|----------------|--------|--------|
| 11. Ալթուն | Առաքել | Էֆէնտի |
| 12. Արապեան | Սարգիս | » |
| 13. Իկիտպաշեան | Ասապա | » |
| 14. Խանտանեան | Յակոբ | Պէյ |

15. Փարիզեան Պետրոս Էֆէնտի

16. (- - - - -)

Ատենադպիր էֆ. յարեց թէ ժողովոյն կը մնայ սոյն ցուցակին համեմատ փոփոխելի 15 աշխարհական երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութեան համար գործադիր Յանձնաժողովոյ յանձնել, որ հրահանգ զրկէ Սամաթիոյ եւ Խասգիւղի թաղերուն, որպէս զի իրենց թաղերուն դադարեալ երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարեն: Իսկ դադարեալ երեսփոխանք հարկաւ մինչեւ ցաւարա նորոգ ընտրութեանց պարտաւոր են իրենց պաշտօնը շարունակել:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այս կէտին

մէջ հակասութիւն մը կը նշմարեմ, հրահանգ պիտի զրկուի յիշեալ թաղերուն որ իրենց երեսփոխանները դադարած են եւ անոնց տեղ նորերն ընտրեն. բայց ընտրողք հոս պիտի գան ու տեսնեն որ իրենց պաշտօնապէս դադարեալ հրատարակուած երեսփոխանը ասդին պաշտօնական աթոռի վրայ բաղմամ պաշտօն կը վարէ. պաշտօնէ դադարում եւ պաշտօնավարութիւն միեւնոյն վայրկեանին միեւնոյն անձին վրայ չեն կրնար իրականանալ. ահա ամենաձեռնարկ հակասութիւն մը: Ես ալ դադարեալներէն մէկն եմ, եւ քանի որ այսօրուրնէ դադարած եմ, ալ չեմ կրնար շարունակել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — 1865 թուականի

Մայիսին վիճակարկութիւն եղած ատեն այս խնդիրը լուծուած եւ որոշուած է որ մինչեւ նորերը չընտրուին, եւ անոնց ընտրութեան տեղեկագիրը հոս գալով չվաւերանայ, վիճակաւ ելնելու կարգն ստացող երեսփոխանները պաշտօնէ չդադրին. 2 տարի առաջ ալ Գ. շրջանի լրման ատեն միեւնոյն որոշումն ի գործ դրուեցաւ:

Տ. ՂԵՒՈՆԳՎ ՎՐԳ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ —

Աշխարհական երեսփոխանաց համար ըսուեցաւ որ դադարած են, միթէ եկեղեցական երեսփոխաններէն դադարող չկա՞յ:

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Ինչպէս որ Օգսէն էֆ.

առարկեց, Ազգին ներկայացուցիչները պայմանաժամաւ ընտրուած են, քանի որ 10 տարուան համար պաշտօն առած են, չկրնար պաշտօնին 10 տարի մէկ ժամ տեսել, եւ մեք չենք կրնար Ազգին կամացը վրայ իշ-

խել: Փարիզեան էֆ. ի ըսած որոշումն ալ ստոյգ է թէ եւ, բայց սխալ է, զեզում մ'է եղածը. ճիշդ Սահմանադրութեան 71-րդ յօդուածոյն համեմատ պէտք էր որ Ս. Պատրիարքը փետրուար ամսէն սկսեալ նոր ընտրութիւններն ընել տար. մեք կրկարծէինք որ այս տարուան համար նոր ընտրութիւններն եղած են եւ դադարելոց տեղ նոր դալիք երեսփոխանները պատրաստ պիտի լինին, բայց ընդհակառակն կը տեսնուի որ Մայիսը կաւարտի եւ դեռ նոր ընտրութիւնք չեն կատարուած. ուստի Փարիզեան էֆ. ի յառաջ բերած որոշումն ինձ համար անընդունելի է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ Սահմանա-

դրութեան երեսփոխանաց պաշտօնը 10 տարի կը տեսէ եւ երկու տարին անգամ մը 1/5 մասը վիճակաւ կը փոխուի: Արդէն ինչպէս որ պատմաւոր ալ ըսի, վիճակարկութիւնը 10 տարուան համար 1865 թուականին կատարուեր եւ որոշուեր է միանգամայն որ այն երեսփոխանք որոնց վիճակաւ փոփոխութեան ժամանակը հասած է, շարունակեն իրենց պաշտօնը մինչեւ որ իրենց տեղ նորերն ընտրուին: Այսպէս եղաւ նաեւ ասկէց երկու տարի առաջ երբ Գ. վիճակն ստացող երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնները տեղի ունեցան: Այս տարի Ե. վիճակին եկած է կարգը, որով Սամաթիոյ եւ Խասգիւղի երեսփոխանները պիտի փոխուին. ասոնց մէջ կան որ իրենց պաշտօնավարութեան 10 տարին լրացուցած են, կան ալ որ տակաւին մէկ երկու տարիէ ՚ի վեր ընտրուած են. բայց մեզի համար 10 տարին լրացուցած կը համարուին. որովհետեւ վիճակաւ փոփոխութիւնը թաղերու վրայ եղած է: Մաղմման էֆ. կըսէ թէ փետրվարէն սկսեալ պէտք էին նոր ընտրութիւնները կատարուիլ. ասի թէ եւ ճիշդ է, բայց չէ եղած, ինչու որ յոգովին պէտք էր ներկայանալ եւ ապա թէ ընտրութիւնները կատարուէր. հիմա ժողովին կը ներկայանայ, ուստի մեր պարտքն է անմիջապէս նոր ընտրութեան հրահանգը զրկել տալ, եւ եթէ այս ընտրութիւնները յապաղին, մեք մեր պարտքը կատարած կըլլանք եւ ընտրողք իրաւունք չեն ունենար բողոքելու: Գալով Տ. Ղեւոնդ վարդապետին, որ հարցուց թէ եկեղեցական երեսփոխաններէն դադարեալներն որոնք են, կը պատասխանեմ թէ եկեղեցա-

կանք ալ վիճակ մը ստացած են թէ եւ, բայց ետքէն եղած ընտրութիւններով չգիտցուիր այս տարուան փոփոխելիներն որոնք ըլլալը, եւ կարծեմ անոնց մէջ 10 տարի շարունակաբար պաշտօն վարող ալ չգտնուիր: արդէն 2 տարի առաջ եղած քննութիւնը ցուցուց որ թէ եւ եկեղեցականք ալ վիճակարկութեան հինգ կարգ ստացեր են, բայց անկէ առաջ փոփոխութիւնները վիճակարկութեան համեմատ եղած չըլլալով այժմ Ե. վիճակն ստացող եկեղեցական երեսփոխանք ո՛րք ըլլալն որոշակի չգիտցուիր. ուստի ես կառաջարկեմ որ 2 տարիէն ետեւ ըլլալիք փոփոխութեանց միջոցին եկեղեցականաց համար նոր կարգ մը սահմանուի, որպէս զի դժուարութեան տեղի չմնայ:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Աշխարհական երես-

փոխանաց ընտրութեան համար դժուարութիւններ մէջ կը բերուին, որոնք աւելորդ կը դասուիմ. արդէն վիճակահանութիւնը կատարուած է եւ ընտրութիւնները կը մնայ ընել: 15 որ առաջ նիստ մը ունեցանք, առանց մեծամասնութեան. թէ որ մեծամասնութիւն ըլլար, մայիսի սկիզբները տեղի պիտի ունենար այս նիստը, որ դարձեալ Չատակի տօնին աթիւ այսչափ յապաղեցաւ, եւ հազիւ այսօր մեծամասնութիւն ունեցանք. այս պատճառաւ է որ ընտրութիւններն այսչափ ետ մնացին: Աւրելն այսօր որոշենք Ե. վիճակն ստացող երկու թաղերուն հրահանգ զրկել որ իրենց չէ թէ դադարեալ, այլ դադարելի երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնները կատարեն: Երբ այսպէս բառական ճշդութիւնը պահենք, ձեւի պակասութիւնը կը վերնայ եւ խնդիրը կը լուծուի:

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Կատարելու թէ

Ե. վիճակն ստացող երեսփոխանաց մէջ կան որ իրենց պաշտօնավարութեան 10 ամեայ շրջանը դեռ լրացուցած չեն եւ կրնան իրենց պաշտօնը շարունակել մինչեւ որ իրենց յաջորդաց ընտրութիւնը կատարուի: Ասի սխալ է. այն երեսփոխաններն որոնց դադարման կարգն եկած է, կուզէնէ մէկ տարի պաշտօն վարած լինին, մեզի համար 10 տարին լրացուցած կը համարուին եւ պէտք է որ անմիջապէս մեկնին իրենց երեսփոխանական աթոռէն: Ընդհանուր ժողովը կարող չէ զանոնք կեցնել եւ ազգին իրաւանցը վրայ բռնաբարութիւն գործածել:

Ազգային Վարչութեան պարտքն էր Սահմանադրութեան 71րդ յօդուածոյն համեմատ նոր ընտրութիւնները ժամանակին կատարել տալ, բայց չէ գործադրած, եւ այս պատճառաւ մեք իրաւունք չունինք այժմ ըսել այն երեսփոխանաց՝ որ օրինօք դատարեալ են, պաշտօնինդ շարունակեցէք մինչեւ ձեր յաջորդներն ընտրուին:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Կառավարիւմ որ Սահմանադրութեան 71րդ յօդուածը կարգացուի:

Ատենադպիր էՖ. կընթեռնու նոյն յօդուածը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համարինք թէ պահասութիւն մը տեղի ունեցեր է, որ ըստ ինքեան այնչափ մեծ բան մը չէ. ասանկ փոքրիկ պակասութեանց՝ որ ամեն փորձութեանց մէջ ալ կրնան պատահիլ եւ զորս փորձառութիւնը հետզհետէ պիտի ուղղէ, ներողամիտ պէտք է գտնուինք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ներողութեան հարկ չկայ. արդէն որոշում մը եղած էր եւ նոյն որոշման համեմատ Ե. վիճակի փոփոխութեան խնդիրը ժողովին պէտք էր զալ, որ ըստ օրինի ընտրութիւնները կատարուէին:

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Եղած պակասութիւնը չտկելու համար կառավարիւմ որ Ե. վիճակաւ դադարեալ երեսփոխանաց տեղ մինչեւ որ նորերն ընտրուին, ժողովն առժամանակեայկերպիւ դադար տոնու. եթէ այսպէս չըլլայ, ինչ իրաւամբ դադարեալ երեսփոխանք պիտի գան նստին հոս:

Տ. ԱՄԲԲՈՒՄՈՍ Վ.ՐԻ. — Նոյն իրաւամբ, որով փետրուարէն իրենց յաջորդներն ընտրել պէտք էր եւ չեն ընտրուած, պէտք է որ գան շարունակեն իրենց պաշտօնը:

Այս պահուս այլ եւ այլ նստարաններէ քուէի դնելու ձայներ կը լսուին:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օրէնքը դադարեցած է այն երեսփոխանները՝ որ Ե. վիճակի փոփոխութեան կարգն ստացած են. ինչո՞ւ քուէի դնենք:

ԻԽԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Եղած խօսքերէն յայտնի կըլլայ որ պայմանաժամը լրացուցած երեսփոխանք՝ օրէնքը մեզ դադարեցուցած է ըսելով կարելի է այսօրուցնէ ետքը ժողովին չգան, ինչպէս մէկ երկուքը յայտնեցին, եւ ա-

սով ժողովոյ մեծ մասը գտնելն ալ դժուարին կըլլայ. ուստի կը ձայնակցիմ Մաղլմեան էՖ. ի առաջարկութեանը թէ մինչեւ նոր ընտրութիւնք կատարուին Ընդհանուր ժողովն առժամանակեայ կերպիւ իւր նիստերը գաղթեցնէ. եւ 15-20 օրուան մէջ այդ նոր ընտրութիւնները կատարելու հոգ տարուի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Երեսփոխանաց մէջ հաւասարութիւն պէտք է. ինչպէս կըլլայ որ մաս մը ըստ օրինի դադարեալ եւ մաս մը չդադարեալ գան նստին ժողովոյն մէջ, Ըսող եղաւ թէ պէտք էր որ Սրբազան Պատրիարքը փետրվարէն սկսեալ նոր ընտրութիւնները կատարել տար: Եթէ Ս. Պատրիարքին է այդ իրաւունքը՝ մեք չենք կրնար հոս քուէի դնել այս խնդիրը, եւ չա՛տ չա՛տ մեր ընելիքը խնդրոց կարգէն դուրս ձգելն է իբրեւ Ընդհ. ժողովոյ իրաւասութեանէն դուրս խնդիր մը. սակայն կարծեմ թէ Ս. Պատրիարքն ալ չկրնար զայդ իրեն վերաբերել: Թէեւ Սահմանադրութեան այն յօդուածը լաւ մը չեմ սերտած, բայց բանականութիւնն իմաց կու տայ արդէն թէ Ս. Պատրիարքն ասանկ ընդհանուր պաշտօն մը չունի, եւ չկրնար երեսփոխանաց դադարումն ու ընտրութիւններն ինք հրամայել: Ըսուեցաւ նաեւ թէ ԳՊԵՐԵՆԵՐԱՐ ԳՊԵՐԵՆԵՐԻՔԻ փոխելով ձեւին մէջ եղած պակասութիւնը կը չտկուի. ընդհակառակն՝ խնդիրը բառին վրայ չէ, ժողովուրդը բառով չխաբուիր. մեք չենք կրնար ընդունիլ որ դադարեալները շարունակեն. ասիկայ նոյն իսկ դադարեալ երեսփոխանաց զգացմանն ալ կը դպչի, եւ իրենք ալ չեն գար: Կրտսէի թէ ասոնց չգալը մեծագոյն մաս գոյանալուն արգելք կըլլայ. այս ալ դժուարութեան պատճառ մը չէ, ինչպէս ոմանք կը կարծեն. վասն զի եթէ օրինակի համար Ընդհանուր ժողովոյ թիւը 80 համարենք, շա՛տ շա՛տ 20 պիտի պակսի եւ Ընդհանուր ժողովոյ թիւը 60 ի պիտի իջնէ. բայց թէ որ դադարեալները շարունակելու ստիպենք, իրաւունքի դաշտ կըլլանք, եւ մեծագոյն մաս գոյացնելն անկարելի կընենք. վասն զի եթէ այսօրուցնէ դադարեալներուն թիւը դուրս ձգենք, եւ օրինակի համար 80 թիւը 60 ի իջեցնենք, մեծագոյն մաս գտնելու համար 31 պիտի ուղենք. իսկ եթէ 80 պահենք՝ 44 պիտի ուղենք, որոյ մէջ պիտի գտնուին դադարեալները, եւ որք չ'պի-

տի գան, ինչպէս որ ես չպիտի գամ ասանց պարտազանցօրէն բացակայ գտնուելով հրաժարեալ համարուելու, որու դէմ այժմէն կը բողոքեմ եթէ տեղի ունենայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ օրէնքն ըստ ամենայնի ի գործ կը դրուի, այն ատեն օրէնք է, եւ հետեւանքը կը տեսնուի: 2 տարին անգամ մը ընտրութիւն պիտի լինի, քանի որ ընտրութիւնը դեռ չէ կատարուած կուգան եւ ընտրութեանէն յետոյ չեն գար. հիմակվընէ ասանկ խնդիր մը յարուցանելու հարկ չկայ, եւ կարծեմ մեր պաշտօնակցաց պատիւն ալ չը ներէք այս խօսքերն ընել. ուստի խնդիրը գոցենք եւ Ս. Պատրիարք չօր յանձնենք՝ որ բարեհաճի նոր ընտրութիւնները շուտով կատարել տալ:

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱԶ. — Օգտէն էՖ. ըսաւ թէ Պատրիարքն ինքնին այդ ընտրութիւններն ընելու արտօնութիւն չունի. ես ալ կըրտեմ թէ արդէն այդ գործը Պատրիարքին չէ. ընտրութեանց Գործադիր Յանձնաժողով մը ունիք, որուն պաշտօնն է երեսփոխանական ընտրութիւնները կատարել:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ըսել ուղեցի որ այն պաշտօնն՝ որ Ձեզ չվերաբերիր, ուրիշները Ձեզ ալ կուղեն:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Յաւալի է այսպիսի առարկութիւններով ժամանակ անցնելը. դադարելի երեսփոխանաց անպատուութիւն է ըսուեցաւ երբ գրուի թաղերուն թէ դադարած են եւ անոնց տեղ ուրիշներն ընտրեցէք: Եթէ փետրվարի մէջ ալ կատարուէր այդ գործողութիւնը, դարձեալ նոյն բանը չպիտի ըսուէր. ու որ ըստ օրինի դադարած եմ կըսէ եւ չգար, ազատ է. սակայն ժողովը զիրենք չը դադարեցնէր. եւ կարծեմ այս ըսողը մէկ կամ երկուքէն աւելի չպիտի ելնէ: Բայց գալով այն առաջարկութեան, թէ մինչեւ նոր ընտրութիւնք չը լինան նիստ չըլլայ, ասի կը նշանակէ տարիներով նիստ չընել: Իւթիւճեան էՖ. որ սոյն առաջարկութեան յարեցաւ, լաւ զիտէ թէ Սամաթիոյ մէջ թաղային վէճ կայ, եւ իւր թաղական խորհուրդը չէ կրցած ընտրել, ինչպէս պիտի ընտրէ իր երեսփոխանները, եւ Ընդհ. ժողովը մինչեւ ե՞րբ պիտի սպասէ անոնց ընտրութեանը:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Սահմանադրու-

թեան 71րդ յօդուածը՝ որ հիմայ կարգացուցաւ, քերկու տարին անգամ մը փոփոխելի երեսփոխանաց տեղ փետրվարէն սկսեալ նոր ընտրութեանց գործողութիւնները կատարուելու են կըսէ, բայց չըսէր թէ անոնց դադարեալ ըլլալը ծանուցանելու է. այդ գործողութիւնները դեռ չեն կատարուած, եւ հիմայ պիտի կատարուին. քանի որ դադարեալ երեսփոխանաց անուանք չպիտի ծանուցուին, ես յայտնապէս կըրտեմ թէ պարտազանցութիւն ըրած պիտի ըլլան անոնք՝ եթէ նոր ընտրութեանց արդիւնքը վաւերացուելէ առաջ իրենց պաշտօնէն քաշուին: Իսկ այն խօսքերը՝ զորս Օգտէն էՖ. մէջ բերաւ Սրբազան Պատրիարքին այս նոր ընտրութիւններն ընելու իրաւունք ունենալը կամ չունենալը յուզելու մտօք, բոլորովին աւելորդ են. հերիք է որ Սահմանադրութեան նոյն յօդուածը կըսէ թէ Պատրիարքը պիտի ընէ: Զարմանալի է որ մեր մէջ սովորութիւն ըրած եմք միշտ յանուն ազգին խօսիլ, ազգին իրաւունքները յառաջ բերել. ասոնք զեղեցիկ խօսքեր են. բայց սա՛ ալ պէտք է զիտնալ որ մենք չենք կրնար Ընդհ. ժողովը մասնաւոր թաղերու կրից եւ շահուցը զոնել, ինչպէս Պէկեան էՖ. Սամաթիոյ թաղին համար աղէկ ըսաւ թէ հոն ծագած խռովութեան պատճառաւ չկրնար ժողովոյ նիստերը դադարման ենթարկուիլ:

ԻԽԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պէկեան էՖ. մեկնաբանեց իմ խօսքս, եւ Սամաթիոյ մէջ խռովութիւն ըլլալը յառաջ բերելով հետեւցուց թէ Ընդհանուր ժողովը չկրնար կապուած մնալ, Բայց ես կըրտեմ. Սամաթիոյ խռովութիւնը թաղական անգամոց ընտրութեան համար լինելով երեսփոխանաց ընտրութիւնը յետաձգելու պատճառ չկրնար ըլլալ:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Արդեօք համոզմամբ կըսէք այդ խօսքը, Իւթիւճեան էՖ. եթէ այնպէս է շատ կըսխալիք:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Թէեւ Սահմանադրութիւնը պայմանաժամը լրացնող երեսփոխանաց դադարումն որոշած է, բայց քանի որ դադարելոց տեղ նոր ընտրութիւնք չեն կատարուած, եւ ըստ որում Ընդհանուր ժողովն որոշած է արդէն որ պաշտօննին շարունակեն մինչեւ նոր ընտրութիւնք կատարուին, հետեւ-

ապէս եւ ալ թէ եւ դադարեալներէն մին եւմ, սակայն քանի որ այդ որոշումը չէ ջնջուած, զայն յարգելու համար պարտաւոր եմ շարունակել իմ պաշտօնս մինչեւ ցաւարտ նորոգ ընտրութեանց:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ըստ ինքեան պարզ խնդիր մը այսչափ վիճարանութեանց առիթ տուաւ, խնդիրը վերջացնելու համար կատարարկեմ որ քուէի գրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ դեռ եւս խօսքն երկարի, պիտի պարտաւորիմ քուէի դնել. բայց ցաւ է ինձ ըսել թէ ծիծաղական բան մը կը լլայ մեր պաշտօնակցաց հոս գալու կամ չըգալու խնդիրը քուէի դնել: Գիւանը պարտաւորութիւն մ'ունէր յատեն ժողովին թէ վիճակաւ փոխուելիք երեսփոխանաց անդ նոր ընտրութիւններ կան կատարուելիք. այս օրինակեան դործողութիւնը չկատարուած բարոյապէս պարտաւոր են այն երեսփոխանք՝ որ վիճակաւ պիտի դադրին, շարունակել իրենց պաշտօնը: Աւտի դիւանը հարկ չ'դատիր այս խնդիրը քուէի դնել:

Գիւանին կողմէն եղած այս վերջին առաջարկութիւնն առանց դիտողութեան ընդունուելով կորոշուի Ս. Նախագահ Զօր յանձնել, որ ընտրական դործողութեանց հրահանգն ուղարկէ որոշեալ թաղերուն, եւ վիճակաւ ելնող երեսփոխանք շարունակեն իրենց պաշտօնը մինչեւ որ նոր ընտրութիւնք վերջանան:

ՎԵՐԵՆՈՐԴՈՒԹ ԳԻՒԱՆԻՆ ԸՆԳՆՆՈՒԹ ՓՈՂՈՎԻՆ

Ատենապետ է.Ֆ. ըստ Սահմանադրութեան դիւանին նորոգութեան պայմանաժամն արդէն հասած ըլլալը ծանուցանելով հրաւիրեց ժողովը դիւանին նոր անդամոց ընտրութիւնը կատարել:

Հետեւապէս քուէարկութեան ձեռնարկուելով եւ քուէարկուաց թիւը 47 ի համեմտով, քուէհամարը կատարուեցաւ ժողովին մէջ դիւանին կողմէ կարգեալ հետեւեալ քննչաց ձեռք:

- Տ. Ղեւոնդ Վարդապետ Փիրղալէմեան
- Տ. Ամբրոսիոս » Իսկէնտէրեան
- Կարապետ Էֆէնտի Իւթիւճեան
- Յարութիւն » Մարգարեան

Սակայն ոչ ոք բացարձակ առաւելութիւն ստանալով, համեմատական քուէարկութիւն կատարելու համար առաւելագոյն քուէ ստացողներէն կրկնապատիկ թուով հետեւեալ ցուցակը պատրաստուեցաւ:

Ա. Ատենապետութեան համար		
Յարութիւն	Էֆէնտի	Տատեան
Գրիգոր	»	Օտեան

Բ. Ատենապետութեան համար		
Ստեփան	Փաշա	Արսլանեան
Յարութիւն	Էֆէնտի	Տատեան

Գ. Ատենապետութեան համար		
Ստեփան	Փաշա	Արսլանեան
Սարգիս	Էֆէնտի	Աղաբէկեան


Ա. Ատենապետութեան համար		
Տիգրան	Էֆէնտի	Նուսուֆեան
Թադէոս	»	Պէկեան

Բ. Ատենապետութեան համար		
Միքայէլ	Էֆէնտի	Մամիկոնեան
Յարութեւն	»	Մէրեէմ-գուլի

Գ. Ատենապետութեան համար		
Պողոս	Էֆէնտի	Պառնասեան
Միքայէլ	»	Մամիկոնեան

Սրբ տարածմամբ ըլլալուն պատճառաւ համեմատական քուէարկութիւնը յաջորդ նիստին մնաց, եւ Ատենանը գոցուեցաւ ժամ 10 ին՝

Արեւուդէր Արեւուդէր ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ



ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ

Ի տան չ'գրի մ. խնդրագրութեամբ մասնաւոր վիճակի մասին որ
պարտաւորեալ ըստ ի վերջի մ. խոյ պառնասեանց ք. միւս

ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒՓԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ՚ի Գիւ. անտառան Պատրիարքարանի, և կը գտնուի
ամեն գրախաճառաց քով և Եկեղեցեաց բանկայնէրը :